ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը. Մարինե Հարությունյան, ՀՀ ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության հաշվառման և սպասարկման գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները. Ավստրիայի հանրապետություն, ք. Վիեննա, 2024թ. մարտի 25-ից ապրիլի 5-ը

3. Հրավիրող կողմը. Արժույթի միջազգային հիմնադրամ

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).** աշխատաժողովին մասնակցություն, նոր գիտելիքների ձեռքբերում, աշխատանքի արդյունավետության բարձրացում:

5. Քննարկված թեմաները.

1. <<GFSM 2014>> համակարգի ընդհանուր բնութագիրը,
2. Հանրային հատվածի միավորները, հոսքեր, միջոցներ և հաշվառման կանոններ,
3. Կառավարության կողմից իրականացվող գործառույթներ՝ պետական քաղաքականության կարիքների համար վարկավորման, պետական երաշխիքներ և պետական պարտքի հետ կապված գործողությունների, մասնավորեցման, շահաբաժինների հաշվառման մոտեցումներ,
4. Եկամուտ, ծախս, գործառական դասակարգում,
5. GFSM 2014-ի ընդհանուր սկզբունքները ինտեգրված շրջանակում GFS-ի համապարփակ խնդիրների նկատմամբ, ինչպիսիք են սոցիալական պաշտպանության սխեմաները, ստանդարտացված երաշխիքային սխեմաները, լիցենզիաներ, վարձակալություն, պետական-մասնավոր համագործակցություն, պետական հատվածի հաշվեքշիռ,
6. Պետական հատվածի պարտքի վիճակագրություն,
7. Պարտքի վերակառուցման վիճակագրական հաշվառումը,
8. Վրաստանի և Ճապոնիայի փորձի ներկայացում,
9. Պետական ֆինանսների վիճակագրության ձևաչափով հաշվետվության կազմումը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը. Դասընթացին մասնակցում էին 15 երկրների 26 ներկայացուցիչներ: Դասընթացի ընթացքում Արժույթի միջազգային հիմնադրամի ներկայացուցիչների կողմից ներկայացվեցին դասախոսություններ, որոնք իրականացվում էին հարցուպատասխանի ռեժիմով: Դասախոսություններից հետո, ներկայացված թեմաների վերաբերյալ, առաջադրվում էին խնդիրներ, քննարկումների արդյունքում ներկայացվում էին առաջադրված խնդիրների լուծման հետ կապված առաջարկներ:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.** Հանդիպումների շրջանակներում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.** Ձեռքբերված գիտելիքներն անմիջական առնչություն ունեն պարտքի կառավարման գործառույթների հետ և կիրառելի են ԱՄՀ-ին պարտքի կառավարման վարչության կողմից ներկայացվող հաշվետվությունների ներկայացման ընթացքում: Առաջարկում ենք կառավարության ֆինանսների վիճակագրության շրջանակներում պատրաստվող հաշվետվություններում կառավարության պարտքին առնչվող ցուցանիշները լրացնել ԱՄՀ կողմից մշակված «GFSM2014», իսկ պետական հատվածի պարտքի վիճակագրությունը՝ «PSDS2013» ձեռնարկներով սահմանված վիճակագրական մեթոդներին հնարավորինս համապատասխան:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը**

Մարինե Հարությունյան

09.04.2024թ.